ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 04 2026թ.
№ Կնապ2/1970

«ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ին / ՀՎՀՀ 06975385/
ՀՀ, ք.Վանաձոր, Վարդանանց 122
էլ. փոստի հասցե՝ arlivachllc@gmail.com
Հեռ.՝ +37494550255

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ի միջև 05.11.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-7/19-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ն ապրանքների մատակարարման արդյունքում պետք է մատակարարեր 500 լրակազմ սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաներ /Մարզական համազգեստ (կոշիկով)/ և 200 լրակազմ սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաներ /Համազգեստ ԶՈՒ թիմերի հավաքականի շքերթային/, որն ամբողջությամբ չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.04.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **141 840** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **1 021 248** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 02.04.2026թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **2 850 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **4 275 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև **2026թ. մայիսի** 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **2 850 000**ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **4 275 000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԱՐԼԻՎԱՉ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: **Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մայիսի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2074 սենյակ:**

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ